ԷՐԵԲՈՒՆԻԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿՆՔԱԴՐՈՇՄԸ

ԱՐՄԻՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2007 թ. հունիսին Էրեբունիում անցկացվող հերթական պեղումների ընթացքում, հյուսիսային լանջի պեղավայրից հայտնաբերվել է ձիու և թռչնի պատկերով կնքադրոշմ (աղ. I, նկ. 1, 2)[1]: Այն արժանի է առանձնակի ուշադրության, քանզի պատմամշակութային հուշարձան լինելուց զատ մեծ տեղեկատվություն է պարունակում տվյալ ժամանակաշրջանի (մ. թ. ա. IV–II դդ.)[2] կրոնական պատկերացումների մասին: Կնքադրոշմը կլորավուն է, փոքր-ինչ ճաքճքված, մոտավորապես 2.5 սմ տրամագծով: Կնքադրոշմի տրամագիծը 1 սմ է, այն պատկերում է խրոխտ կեցվածքով դեպի աջ ընթացող ձի, որի գավակին թռչուն է պատկերված: Բավականին պարզ գծագրվում են ձիու գլուխը, բաշը, առաջ ցցված ականջը, գավակը և պոչը, շատ թույլ են գծագրված գավակի վրայի թռչունը, ետևի ոտքերը, առջևի վերջույթներից մեկը բարձրացրած է, իսկ մյուսի մասին կարելի է միայն ենթադրություններ անել, քանի որ կնքադրոշմի վրայի ճաքը խիստ աղավաղում է պատկերը:

Ձիու պատկերները մեծ տարածում ունեն տվյալ ժամանակաշրջանի փորագրման արվեստում, սակայն դրանք մի շարք նոր կերպարների՝ արծվառյուծների (գրիֆոնների) և կենտավրոսների հետ առաջին անգամ ի հայտ են գալիս մ. թ. ա. XIV դարի ասորեստանյան գլիպտիկայում: Տվյալ կերպարների ներմուծումը գեմմաների թեմատիկա համընկնում է ալմաստե (ադամանդե) շաղափի հայտնագործության և գունավոր կարծր քարերի՝ ագաթի, խալցեդոնի ու սերդոլիկի մշակումը դյուրացնող նոր տեխնիկայի ի հայտ գալու հետ Ասորեստանում, Բաբելոնում և Էլամում: Այդ տեխնիկայի տարածումը Առաջավոր և Միջին Արևելքի հին երկրներում համընկնում է զարգացած ձիաբուծության և կառքերի հետ, իսկ ավելի ուշ՝ ձիավարության մեջ ձիերի օգտագործման հետ[3]: Գլիպտիկայում կարծր նյութի վրա, միևնույն տեխնիկայով փորագրված ձիերի բազմաթիվ պատկերներ են հայտնվում: Ժամանակի ընթացքում ձիերի պատկերումների քանակն ավելանում է՝ իր գագաթնակետին հասնելով մ. թ. ա. I հազ. կեսերին: Դա առաջին համաշխարհային տերության՝ Աքեմենյան Իրանի կազմավորման և գործունեության ժամանակաշրջանն էր (մ. թ. ա. VI–IV դդ.): Նեղոսից մինչև Ամուդարյա և Սիրդարյա միջգետային տարածությունները ձգվող Աքեմենյան տերության տարածքում արդեն գոյություն ունեին ձիերի 5–6 տեսակներ, որոնց պատկերում էին գլիպտիկայում:

Հայաստանից հայտնաբերված ու մ. թ. ա. VI – մ. թ. II դդ. թվագրվող կնիքների, ինչպես նաև Արտաշատի V բլրից հայտնաբերված կնքադրոշմների մեջ[4] (աղ. I, նկ. 4–7) մեծ տեղ

---

[1] *Այն սիրով մեզ է տրամադրել Ֆ. Ռ. Տեր-Մարտիրոսովը, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:*

[2] *Թվագրումը ըստ Ֆ. Ռ. Տեր-Մարտիրոսովի:*

[3] С. Я. Б е р з и н а. Образ ахалтекинца на древних геммах и печатях, статья из интернета (www.maak.ru/inform.php3?id=111, издание “Ахалтеке-Информ”, 2003).

[4] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայ-իրանական մշակութային կապերն ըստ Արտաշատի կնքադրոշմների.– Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Երևան, 1995, էջ 27-28,* D o b r e e. Arménie, Trésors de l’Arménie ancienne. Paris, 1996, p. 223–224.

են զբաղեցնում ձիու պատկերներով կնիքներն ու բուլլաները՝ կռվի տեսարաններում կամ մարտակառքին լծված, առանձին կամ այլ կենդանիների հետ՝ առասպելական Պեգասի տեսքով: Եթե Արմավիրից[5] (աղ. I, նկ. 8), Ազարակից[6] (աղ. I, նկ. 13), Գառնիի[7] (աղ. I, նկ. 9) և Դվինի[8] (աղ. I, նկ. 11) կարասային թաղումներից հայտնաբերված բազմանիստ կնիքների վրա ձին ներկայանում է իբրև զինվորներին և հերոսներին կռվի կամ որսի ժամանակ ուղեկցող կենդանի՝ երևակելով բարձրաշխարհիկ մարդկանց կյանքն ու զինվորների սխրանքը, ապա Էրեբունիի կնքադրոշմի վրա ձին միանշանակ հանդես է գալիս իբրև պաշտամունքային կենդանի:

Չիու պատկերով պաշտամունքային բովանդակությամբ կնիքներ են հայտնաբերվել Գյումրիից[9] (աղ. I, նկ. 10), Օշականից[10] (աղ. I, նկ. 14), Գեղաղիրից[11], Գորիսից (Բրուն գյուղ)[12] (աղ. I, նկ. 12), Բենիամինից[13], Արտաշատից[14](աղ. I, նկ. 3), որոնց վրա ձին պատկերված է կամ առասպելական Պեգասի տեսքով, կամ եղջերուի հետ, կամ էլ գավակին թոչուն նստած՝քառատրոփ վազքի ժամանակ: Թեմա, որը կապված է հնագույն պատկերացումների ու հավատալիքների հետ: Վերջինիս զուգահեռները տեսնում ենք բրոնզեդարյան գոտիների վրա և որը հելլենիստական ժամանակաշրջանում լայն տարածում է ստանում Հայաստանի տորևտիկայում:

Ի՞նչ է իմաստավորում այս պատկերը, կենդանիների այս համատեղումը, կփորձենք մեկնաբանել ստորև՝ ժամանակաշրջանի ծիսապաշտամունքային, կրոնական պատկերացումների, հնագիտական գտածոների, հեքիաթների ու առասպելների վերլուծության միջոցով:

Ընտելացվելուց ի վեր ձին միշտ եղել է մարդու կողքին և համարվել սրբազան կենդանի: Զարգացման ընթացքում մարդը ձիու կերպարի մեջ տեսել է իր աստվածությունների կրողն ու խորհրդանիշը և այդ պատճառով էլ ամեն կերպ սիրաշահել ու զարդարել է նրան: Հին հույների մոտ Զևսի երիվարներն ունեին արծաթե պայտեր,

---

[5] *Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 33:*

[6] *Այս կնիքը սիրով մեզ է տրամադրել Պավել Ավետիսյանը, ինչի համար հայտնում ենք մեր երախտիքը:*

[7] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 100:*

[8] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1982, էջ 134, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները.– ՊԲՀ, 1965, № 1, էջ 273, նկ. 1:*

[9] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները, էջ 275, նկ. 3:*

[10] С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. Ошакан I. Ереван, 1988, с. 58.

[11] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները, էջ 276, նկ. 5:*

[12] *Օ. Խ ն կ ի կ յ ա ն. Նորահայտ հուշարձան Գորիսում.– ՊԲՀ, 1981, № 4, էջ 313, նկ. 3/1:*

[13] *Լ.Գ. Ե գ ա ն յ ա ն. Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2002, էջ 9:*

[14] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ II, Երևան, 1981, էջ 91, նկ. 49/6:*



նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ. 7

նկ. 8



նկ. 9



նկ. 10



նկ. 11



նկ. 12



նկ. 13



նկ. 14

Աղյուսակ I

Հելիոսն ամեն առավոտ արևելքից մեկնում էր չորս արագոտն, կրակաշունչ ձիեր լծած ռազմակառքով, Պոսեյդոնը զույգ ձիերով էր շրջում օվկիանոսում: Պատերազմի աստվածները՝ արիական Ինդրան և իրանական Միթրան, հնում զինվորների համար կերպավորվում էին մարտակառքերով, որոնց լծված էին «աստվածային» ձիերը: Չին կելտական Էպոնա աստվածուհու ատրիբուտն էր և այլն:

Չին պաշտամունքային կենդանի էր նաև Հին Հայաստանում՝ կապվելով արեգակի պաշտամունքի հետ: Խոր արմատներ ունեցող այս երևույթը տակավին զորավոր էր նաև վաղ միջնադարյան (մ. թ. IV-VII դդ.) Հայաստանում և գոյատևում էր զարգացած միջնադարում (X–XIII դդ.)[15]: Հանրահայտ է Քսենոֆոնի տեղեկությունն այն մասին, թե մ. թ. ա. V դ. վերջերին Հայաստանում արևի աստծուն ձիեր էին զոհաբերվում[16] և այս կապակցությամբ՝ նաև գիտնականների այն ենթադրությունը, որ Արմավիրի տաճարին ձիերով մարտակառքեր էին նվիրաբերվում[17]: Այս ենթադրությունն արվում է Արմավիրի հունարեն արձանագրությունների թարգմանության և վերլուծության, ինչպես նաև Խորենացու «Հայոց պատմության» այն հատվածի հիման վրա, որտեղ պատմահայրը հաղորդում է, թե Երվանդյան շրջանում Հին Արմավիրի տաճարում կանգնեցված էին Արեգակի, Լուսնի և թագավորական նախնիների արձանները[18]: Արևի տաճարներին մարտակառքեր նվիրելու սովորությունն ընդունված էր ողջ Փոքր Ասիայում և Արևմուտքում[19]:

Ավելի ուշ ձին մարմնավորեց արևի աստված Միհրին, որի պաշտամունքը լայն տարածում ստացավ, երբ իրանական արևի աստված Միթրայի պաշտամունքը ներթափանցեց Հռոմեական կայսրություն: Աքեմենյան տիրապետության շրջանում պարսից արքային Միհրական տոների համար Հայաստանից տարեկան 20.000 մտրուկ ուղարկելու մասին հիշատակում է հույն պատմիչ Ստրաբոնը[20]:

Չիու զոհաբերությունն ընկալվում էր որպես կենդանու այն աշխարհի հետ ունեցած կապի արտահայտություն: Չին թաղման ծիսակարգում զոհաբերվել է որպես ուղեկից ու ծառայող անդրշիրիմյան աշխարհում, միաժամանակ՝ արեգակնային բնույթի աստվածության զոհաբերություն, զոհաբերություն Միհրին[21]:

---

[15] *Չիու պաշտամունքը գոյատևել է մինչև ուշ միջնադար, դրանով է բացատրվում ձիակերպ գերեզմանաքարերի առկայությունը քրիստոնյաների վրա. Ղ ևոնդ Ա լ ի շ ա ն. Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 84–85:*

[16] *Քս ե ն ո ֆ ո ն. Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, գիրք IV, գլուխ 35:*

[17] *Հ. Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 65-66:*

[18] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, գիրք Բ, գլ. Ը, էջ 140, Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. նշվ.աշխ., էջ 19:*

[19] *Հ. Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 66:*

[20] *Ս տ ր ա բ ո ն. քաղեց և թարգմանեց Հրաչյա Աճառյան, Երևան, 1940, էջ 61, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 456:*

[21] *Լ. Ե գ ա ն յ ա ն. Շունը և ձին անտիկ Բենիամինի թաղման ծեսում.– Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ, Գյումրի, 1998, էջ 51:*

Հարկ է նշել, որ դիցաբանության մեջ ձին ունի երկակի բնույթ. նախնառաջ իբրև արեգակնային ուժ՝ սպիտակ, ոսկե կամ հրեղեն ձին հայտնվում է Արեգակի աստվածությունների (Հելիոս, Ռա, Ինդրա, Միթրա, Մարդուկ) կառքերին լծված, իբրև լուսնի (խոնավության, ծովի և քաոսի տարր) ուժ՝ կապվում է օվկիանոսային աստվածությունների հետ (օր. Պոսեյդոնի աստվածային երիվարները[22]):

Թերևս Սևանի հայտնաբերված գոտու (աղ. II, նկ. 1) վրա պատկերված ձիերն էլ առասպելական էակներ են, որոնք կապվում են արևի ու ջրի հետ[23]: Դարերի խորքից մեզ հասած հայկական հեքիաթներում հերոսները ձիերին դուրս են բերում ծովի հատակից՝ թափահարելով նախապես ծովի ափին պահվող սանձը: Ակներևաբար դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նկարագրվող ժամանակաշրջանի շատ դամբարաններում գտնվում են սանձեր՝ առանց ձիու մնացորդների: Հավանաբար, հանդերձյալ աշխարհում ննջեցյալն իր հետ տանում է սանձը՝ ձիուն այնտեղ գտնելու համոզմամբ: Ծովերի, լճերի մեջ ապրող այս ջրածին և հրեղեն ձիերը կարող են ի կատար ածել մարդկանց բոլոր ցանկությունները: Ծովից է ելնում նաև հայոց Քուռկիկ Ջալալին ու իր ծնունդով նախանշում կապն անդրշիրիմյան աշխարհի հետ, իսկ հրեղեն էությամբ՝ կապն արեգակի հետ: Նա օժտված է մարգարեական ձիրքով՝ կարող է մարդու պես խոսել, սլանալ հողմից արագ, ծովի խորքերից սուրալ մինչև արևը: Պատահականությո՞ւն է արդյոք այն, որ հայկական ժողովրդական հեքիաթներից մեկում («Հրեղեն ձին») ձիու տիրոջ անունն Արևշատ է, որը մեկ անգամ ևս մատնանշում է ձիու կապը արեգակի հետ: Միևնույն հեքիաթում հրեղեն ձին հայտնում է, որ մի քանի տարի առաջ նա դուրս է եկել ծովից և այժմ ապրում է հողածինների մոտ[24]: Ձիու երկակի էությունն է մատնանշում նաև Ն. Յ. Մառն իր աշխատություններից մեկում՝ իմաստաբանորեն կապված արշալույս+ձի+արեգակ բառ-կերպարների խմբի վերլուծության հիման վրա: Նա նշում է, որ ձին մի կողմից ընկալվում է իբրև նոր ծագող արև, արշալույս, մյուս կողմից իբրև անդրշիրիմյան աշխարհի և մահվան խորհրդանիշ՝ կապվելով մայր մտնող արեգակի հետ[25]: Այսպիսով ձին խորհրդանշում է ինչպես կյանքը, այնպես էլ մահը:

Թռչունները տարբեր դիցաբանական ավանդույթներում հանդես են գալիս իբրև կրոնադիցաբանական համակարգի և ծեսի պարտադիր տարր՝ իբրև աստվածային էության, երկնքի, արեգակի խորհրդանիշներ[26]: Որ թռչունը բոլոր կրոններում սերտորեն կապվում է երկնքի հետ և հաճախ արևային աստվածության արտահայտությունն է, մատնանշում են նաև Ս. Միլլերն ու այլ շատ ուսումնասիրողներ[27]: Հայաստանում ևս թռչունը կապվել է երկնքի ու արեգակի հետ: Լճաշենի բրոնզե գոտու և ընդհանրապես մի շարք այլ իրերի վրա արեգակը ներկայացվում է իբրև թռչուն: Արևը պատկերացվել է կտուցին օղ բռնած

---

[22] Конь. Мифы, статья из интернета, www.newacropol.ru /Alexandria/.symbols/horse/

[23] *Հ. Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Հայաստանի բրոնզե գոտիների որսորդական տեսարանները.– ՊԲՀ, 1966, № 2, էջ 240, նկ. 1, Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի.– Աշխատություններ Հայկական ՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարանի, 1948, № 1, էջ 70, նկ. 1:*

[24] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Արտաշես Նազինյանի մշակմամբ, Երևան, 1967, էջ 146-170*

[25] Н. Я. М а р р. Термины из абхазо-русских этнических связей. Т. V. М.–Л., 1935, с. 133–134.

[26] *Տե՛ս նույն տեղում:*

[27] А. А. М и л л е р. Элементы неба на вещественных памятниках.– Известия ГАИМК 100. М.–Л., 1933, с. 130, 134, 149.

թռչնի կամ զույգ թռչունների կերպավորումով[28]: Դա ավելի վառ ձևով պահպանվել է հայ ժողովրդական բանահյուսության մեջ, որտեղ արևը հաճախ է ընդունում թռչնի կերպարանք.

Մեյ /մեկ/ խավք մը կա իլանի
Բանձրակտուց սիլանի
Կուտ կուտէ երկրի,
Կերթա թառի Բերկրի[29]:

Կամ՝

Խավք ըմ ընցավ էրկնուց
Ոսկի լալկան կեր կտուց[30]:

Վերջին հանելուկը կարող էր «նկարազարդվել» Գեղամա լեռների ժայռապատկերային կոմպոզիցիաներից մեկով[31] (ադ. II, նկ. 2): Հնարավոր է, որ ժայռաքանդակ թռչունը նույնպես խորհրդանշում է արևը: Նման օրինակներ շատ կարելի է բերել: Պատահական չէ, որ Լճաշենի հարուստ դամբարաններում, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերում (Արթիկ, Բայազետ և այլն) գտնվել են թռչունների բրոնզե արձանիկներ կամ շղթաներից կախված բաղիկներ: Շղթաների վերին ծայրերը մեծ մասամբ ավարտվում են գնդով կամ սկավառակով[32]:

Թռչունը (ագռավը) եղել է Միթրայի (Միհրի) հավատարիմ ուղեկիցներից մեկը, որը միթրայական պատկերագրության մեջ միշտ հանդես է գալիս արևի խորհրդանիշի հետ սերտորեն կապված[33]: Ագռավը նաև Միհր աստծո կրկնակ Միհեր դյուցազնի մշտական ուղեկիցն էր մեր էպոսում[34]:

Հետաքրքրական է այն, որ թռչունը, ինչպես և ձին, արեգակնային աստվածության խորհրդանիշ լինելուց զատ կապված է նաև հոգու, մահվան ու հանդերձյալ կյանքի պատկերացումների հետ: Ըստ Պրոպի, թռչնի ֆունկցիան հեքիաթներում և առասպելներում միշտ մեկն է. նա հերոսին տեղափոխում է մեկ այլ աշխարհ[35]: Հնուց մարդկային հոգին հաճախ պատկերացվել է թռչունի (սև կամ սպիտակ) տեսքով[36]:

Թե՛ ձին, թե՛ թռչունը հնում կապվում էին ինչպես Արեգակի աստվածության պաշտամունքի, այնպես էլ անդրշիրիմյան աշխարհի հետ: Բազմիցս կերպավորվելով արվեստի հուշարձանների վրա առանձին-առանձին, իբրև աստվածային սիմվոլներ՝ էրեբունիից հայտ նաբերված կնքադրոշմի վրա դրանք մեզ ներկայանում են համատեղ: Այդօրինակ

---

[28] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 7:*

[29] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 97:*

[30] *Նույն տեղում:*

[31] *Հ. Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, էջ 59–60:*

[32] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964 , с. 198, рис. 77–3,4,5,6,7.

[33] *Գ. Ք ո չ ա ր յ ա ն. Անտիկ դարաշրջանի զոհասեղան Դվինից.– ՊԲՀ, 1977, -2, էջ 282:*

[34] *Հայ ժողովրդի պատմություն, էջ 269:*

[35] В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 167.

[36] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 17, Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, էջ 15:*



նկ. 1

նկ. 2



նկ. 3

նկ. 4

Աղյուսակ II

համատեղումներ մեզ հանդիպում են դեռևս մ. թ. ա. II հազարամյակով թվագրվող բրոնզեդարյան գոտիների (Սևանի, Սանահինի, Լորուտի, Լճաշենի. տե՛ս աղ. II, նկ. 1, 3, 4, աղ. III, նկ. 1)[37], հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող բազմանիստ կնիքների վրա (Գեղադիր, Բրուն գյուղ, Օշական, աղ. I, նկ. 12, 14)[38]:

Թռչունը ձիու (ավելի ճիշտ կառքի) հետ պատկերավորվում է նաև Դվինից հայտնաբերված, որսորդների և ձիերի պատկերներով դրվագված ծիսական եզակի անոթի (աղ. III, նկ. 2), ինչպես նաև Լճաշենի մարտակառքերի վրա: Դվինի կիսով չափ պահպանված անոթի վրա վերին մասում պատկերված են թռչնի դիմակներով և որսորդական լրիվ հանդերձանքով որսորդներ, իսկ ձիերի քաշանի վրա պատկերված է նստած թռչուն[39]: Լճաշենի մարտակառքերից մեկի խարսխաձև հենակի ծայրերը զարդարվել են ոճավորված թռչունների ձևով, քաշանները՝ թռչունների փոքր արձաններով[40]:

Արդ, ի՞նչ է նշանակում ձիու և թռչնի այս համատեղ պատկերումը: Ըստ Ժ. Խաչատրյանի՝ ձիու վրա նստած արծվի հորինվածքը, Արևի աստծու երկու խորհրդանշանների համատեղումը, հզորացնում է այդ աստվածությանը և ուժեղացնում դրա մոգական ազդեցությունը, դառնում հաջողության թալիսման[41]:

Կարծում ենք, որ ձիու վրա թռչնի պատկերումն իր մեջ կրում է հրեղեն ձիու միտումը, նախատիպը: Ինչպես տեսանք՝ թե՛ ձին, թե՛ թռչունը կապվում են արեգակի (երկնքի) ու ջրի (ստորերկրյա, անդրշիրիմյան աշխարհի) հետ: Երկակի բնույթ ուներ նաև հրեղեն ձին, որը դուրս էր գալիս ջրից (ծով, օվկիանոս) ու իր հերոսին կայծակնային արագությամբ տեղափոխում մի վայրից մյուսը, հասցնում մինչև երկինք և արեգակ[42]:

---

[37] S. A. E s a y a n. Gurtelbleche der alteren Eisenzeit in Armenien, Beitrage zur allgemeinen und vergleichenden archaologie, Bd. 6, 1984, Sonderdruck. München, 1985, abb.14/46, 48; abb.16/50; abb.18/55.

[38] С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. *Նշվ. աշխ.: Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները.– ՊԲՀ, 1965, № 1, էջ 276, նկ. 5, Օ. Խ ն կ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 313, նկ. 3/1:*

[39] К. Х. К у ш н а р е в а. Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 12.

[40] *Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Կառամարտիկ զորամասերը և հեծելազորը Հին Հայաստանում, Երևան, 1994, էջ 54:*

[41] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ.– ՊԲՀ, 2003, -2, էջ 172:*

[42] *«Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ IX:*



նկ. 1

նկ. 2

Փորձենք տեսնել, թե ինչպե՞ս է ստեղծվել թևավոր ձիու կերպարը ժողովրդական բանահյուսության մեջ: Հարկ չկա ապացուցելու, որ ձին ընտանի կենդանիներից ավելի ուշ է մուտք գործել մարդկային մշակույթ և կենցաղ: Սակայն ձին հայտնվել է ոչ թե ընտանի կենդանիների փոխարեն, այլ միանգամայն նոր տնտեսական ֆունկցիաների համար: Կարելի է ասել, որ ձին հայտնվել է եղջերվի, թերևս շան, սակայն չի կարելի ասել, որ ձին հայտնվել է թռչնի փոխարեն, որ վերջինս իր վրա է առել նրա տնտեսական դերն ու ֆունկցիաները:

Ինչպե՞ս է այդ անցումն անդրադառնում ժողովրդական բանահյուսության վրա: Տնտեսության նոր ձևն անմիջապես չի ստեղծում դրան համարժեք մտածելաձևեր: Կա ժամանակաշրջան, երբ այդ նոր ձևերը բախվում են հին մտածելակերպի հետ: Տնտեսության նոր ձևը ներմուծում է նոր կերպարներ: Դրանք ստեղծում են նոր կրոն, սակայն ոչ անմիջապես: Բանավոր խոսքում ձիուն կոչում են թռչուն, այսինքն՝ հին տերմինը ստանում է նոր մեկնաբանում: Նույնը կատարվում է ժողովրդական բանահյուսության մեջ. ձին ստանում է թռչնի կերպարանք: Այդպես է ստեղծվում թևավոր ձիու կերպարը[43]: «Մենք այժմ գիտենք,– գրում է Ն. Յա. Մառը,– որ «ձին» նախապատմական շրջանում նշանակել է նաև «թռչուն», սակայն «թռռ-չունն» իմաստաբանորեն կապված է «երկնքի» հետ, և, իհարկե, թռչունը չէր կարող փոխարինել «ձիուն» երկրի վրա մարդկանց կենցաղում և նյութական միջավայրում»[44]:

Թռչնի փոխարինումը ձիով ասիական-եվրոպական երևույթ է: Նույն պրոցեսը կարելի է դիտարկել ամերիկյան բանահյուսության մեջ, սակայն ոչ թե թռչնի, այլ արջի վրա[45]: Ամերիկյան մի առասպելում արջ-տիրակալը տղային երկրի տակ է տանում, և առաջարկում այնտեղ իր համար արջ, այսինքն՝ օգնական ընտրել: Տղան ընտրում է սևին, բայց երբ արջ-տիրակալը նետվում է դեպի վերջինս, արջի փոխարեն այնտեղ կանգնած է լինում հրաշալի սև նժույգ: Այս օրինակը վառ կերպով ցույց է տալիս , թե ինչպես նոր կենդանին իր վրա առնում է հնի կրոնական ֆունկցիաները: Ձին փոխարինում է արջին իբրև օգնական, որը ձեռք էր բերվել «երկրի տակ» արջերի տիրակալից: Սակայն այդ ձին դեռևս իր մեջ կրում է արջից առաջանալու գծերը. նրա վզին արջի մորթի կա, այնպես, ինչպես ռուսական հեքիաթներում Սիվկան ունի թռչնի թևեր: Այլ կերպ ասած՝ կատարվում է ասիմիլյացիա (առնմանում)[46]: Թռչունը միավորվում է ձիուն՝ թողնելով նրան իր թևերը, ինչի

---

[43] В. Я. П р о п п. *Նշվ. աշխ., էջ 170:*

[44] Н. Я. М а р р. Средства передвижения, орудия самозащиты и производства в доистории.– Избранные произведения, т. III. М.–Л., 1934, с. 125.

[45] В. Я. П р о п п. *Նշվ. աշխ., էջ 170:*

[46] *Նույն տեղում, էջ 170:*

արդյունքում ձին պատկերվում է թևավոր, հունական Պեգասի տեսքով, սակայն դա Պեգասը չէ, այլ հրեղեն ձի, որը շատ հաճախ հանդիպում է տարբեր ժողովուրդների հեքիաթներում և մեր էպոսում: Թերևս խնդրո առարկա կնքադրոշմի վրա հենց այդ հրեղեն ձիուն է փորձել կերպավորել հին վարպետը՝ դեռևս չձերբազատվելով կենդանուն և թռչնին համատեղ պատկերելու մեկնաբանումից:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Էրեբունիից հայտնաբերված ձիու և թռչնի պատկերով կավե կնքադրոշմը նոր նյութեր է տալիս հայ դիցաբանության վերաբերյալ, ինչը, անկասկած, հետագա ուսումնասիրության կարիք ունի:

РАСПИСНАЯ БУЛЛА ИЗ ЭРЕБУНИ

АРМИНЭ ГАБРИЕЛЯН

Р е з ю м е

Булла из глины с изображением лошади и птицы была найдена на северном склоне крепости Эребуни летом 2007 г. Булла заслуживает особого внимания как памятник культурно-исторический и как произведение искусства, которое несет информацию о религиозных представлениях жителей древней Армении. Булла почти круглая, диаметром 2,5 см, диаметр оттиска 1 см. На ней изображена идущая вправо лошадь, на спине которой стоит птица. Сюжет этот часто встречается как на бронзовых поясах II тыс. до. н. э., так и на многогранниках эллинистического времени, найденных на территории Армении. Издревле лошадь была почитаемым животным, связанным с солярным культом. Одновременно в различных традициях лошадь представляла собой заупокойное животное, переносящее умершего в иной мир. Теми же качествами обладает “крылатый, огненный конь”. Это не греческий Пегас, а именно крылатый конь, который часто встречается в сказках и легендах многих народов и в армянском эпосе. Обычно “огненный конь” появляется из воды (океана, моря) и может донести своего героя до неба, до солнца.

A PAINTED BULLA FROM EREBUNI

ARMINE GABRIELYAN

S u m m a r y

In the summer of 2007 a clay bulla with the image of a horse and a bird was found on the northern slope of the fortress Erebuni. It deserves special attention both from the view point of the history of culture and art. Besides, it bears informationon religious outlook of inhabitants of ancient Armenia. The bulla

is almost round in shape (diameter – 2,5 cm, that of the impression – 1 cm). It represents a horse going to the right, with a bird standing on its back. Similar scenes often meet both on the bronze belts of the 2nd millennium B.C. and on Hellenistic polyhedrons of Armenia. Since earlier times the horse has been a highly estimated animal, connected with the solar cult. At the same time the horse bore intermediary functions in various traditions, transferring the dead into the other world. The same qualities possesses the “winged, fiery” horse. This is not the Greek Pegasus, but just the winged horse, which often acts in fairy-tales and legends of many peoples and also in Armenian epic. The “fiery horse” usually appears from the water grounds (ocean, sea) and can bring the hero up to the sky and the sun.